



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե՛ ԿԵՂԵՅԻ



ԱՐՏԱՔԱՄԱՆ ԿԻՐԱԿԻ

1 ՄԱՐՏ 2020

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ 1
Ողորմութեան Կանչ Մը (19)	էջ 3
Ծանուցում	էջ 3

**ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(33.2-22)**

Ողորմէ՛ մեզի, Տէր, որովհետեւ քեզի՛ յուսացինք. անհաւատներու սերունդը կորուստի պիտի մատնուի, բայց դուն պիտի փրկես մեզ նեղութեան ժամանակ: Ժողովուրդները քու ահեղ ձայնէդ շշմեցան, հեթանոսները փախան քու վախէդ: Ինչպէս խառնիճն ու մարախը կանաչութիւնը կ'ոչնչացնեն, այնպէս յափշտակիչները պիտի թափին անոնց աւարին վրայ, եւ անոնք ծաղր ու ծանակ պիտի ըլլան: Սուրբ է մեր Տէր Աստուածը որ բարձունքներուն մէջ կը բնակի. իրաւունքով եւ արդարութեամբ պիտի լեցնէ Սիոնը: Այն ատեն հեթանոսները Օրէնքին ձեռքը պիտի մատնուին, իսկ մենք մեր դանձերով պիտի փրկուինք. իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի ըլլան այն դանձերը, որոնցմով պիտի արդարանանք: Այն ատեն ձեր կրած երկիւղները իրենք պիտի կրեն. անոնք՝ որոնցմէ դուք կը վախնայիք, իրենք պիտի վախնան ձեզմէ. պատգամաւորներ պիտի զրկեն ձեզի՛ խաղաղութիւն ուզելով, դառնապէս պիտի լան եւ խաղաղութիւն խնդրեն, որովհետեւ անոնց ճամբաները իրենց աւարտին հասան: Այլ պիտի չվախնաք հեթանոսներէն. անոնց հետ ձեր դաշինքը վերջ պիտի գտնէ եւ ա՛լ զանոնք մարդու տեղ պիտի չզնէք: Աշխարհը կը սգայ, որովհետեւ անչքացաւ. Լիբանանը մերկացաւ, Սարոնի դաշտագետինը տօթէն այրեցաւ, Գալիլիա եւ Կարմեղոս լերկ մնացին: «Հիմա պիտի ելլեմ, -կ'ըսէ Տէրը,- եւ պիտի ցոյց տամ իմ փառքս ու զօրութիւնս, եւ դուք պիտի տեսնէք ու հասկնաք թէ՛ զուր էր ձեր չափազանց ինքնավստահութիւնը եւ կրակը պիտի բնաջնջէ ձեզ: Այո, հեթանոսները պիտի այրին այնպէս՝ ինչպէս դաշտին փուշը կը կտրեն ու կրակը կը նետեն: Հեթանոսները պիտի լսեն ինչ որ ըրի, իմ ժողովուրդս պիտի ճանչնայ իմ զօրութիւնս»: Անօրէնները Սիոնէն դուրս դրուեցան եւ արդէն դողը բռներ է ամբարիշտները.

... իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի ըլլան այն գանձերը, որոնցմով պիտի արդարանանք:

... իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի ըլլան այն դանձերը, որոնցմով պիտի արդարանանք: Այն ատեն ձեր կրած երկիւղները իրենք պիտի կրեն. անոնք՝ որոնցմէ դուք կը վախնայիք, իրենք պիտի վախնան ձեզմէ. պատգամաւորներ պիտի զրկեն ձեզի՛ խաղաղութիւն ուզելով, դառնապէս պիտի լան եւ խաղաղութիւն խնդրեն, որովհետեւ անոնց ճամբաները իրենց աւարտին հասան: Այլ պիտի չվախնաք հեթանոսներէն. անոնց հետ ձեր դաշինքը վերջ պիտի գտնէ եւ ա՛լ զանոնք մարդու տեղ պիտի չզնէք: Աշխարհը կը սգայ, որովհետեւ անչքացաւ. Լիբանանը մերկացաւ, Սարոնի դաշտագետինը տօթէն այրեցաւ, Գալիլիա եւ Կարմեղոս լերկ մնացին: «Հիմա պիտի ելլեմ, -կ'ըսէ Տէրը,- եւ պիտի ցոյց տամ իմ փառքս ու զօրութիւնս, եւ դուք պիտի տեսնէք ու հասկնաք թէ՛ զուր էր ձեր չափազանց ինքնավստահութիւնը եւ կրակը պիտի բնաջնջէ ձեզ: Այո, հեթանոսները պիտի այրին այնպէս՝ ինչպէս դաշտին փուշը կը կտրեն ու կրակը կը նետեն: Հեթանոսները պիտի լսեն ինչ որ ըրի, իմ ժողովուրդս պիտի ճանչնայ իմ զօրութիւնս»: Անօրէնները Սիոնէն դուրս դրուեցան եւ արդէն դողը բռներ է ամբարիշտները.

իսկ ո՞վ ձեզի պիտի պատմէ յաւիտենական կրակին մասին: Եթէ արդարութեամբ ապրիք եւ ուղիղը խօսիք, անօրէնութիւնն ու անիրաւութիւնը ատէք, ձեր ձեռքերը կաշառքէ հեռու պահէք, ոճրային առաջարկներ չլսելու համար ձեր ականջները խցէք եւ անիրաւութիւն չտեսնելու համար ձեր աչքերը փակէք, բարձր եւ հաստատուն ժայռի վրայ շինած կ'ըլլաք ձեր տունը. եւ այն ատեն ո՛չ հացի պակաս պիտի ունենաք եւ ոչ ջուրի. պիտի տեսնէք թագաւորը իր փառքով, ձեր աչքերը պիտի տեսնեն անոր անսահման երկիրը, եւ դուք պիտի խոկաք Տիրոջ երկիւղին մասին: Այն ատեն, ալ ո՛չ մարդահամար կատարողներ պիտի դան, ո՛չ հարկահաւաքներ, եւ ոչ ալ ձեր ամբողջութիւնները լրտեսողներ: Ա՛լ պիտի չլսէք Ասորեստանի անբարտաւան առաջարկները, ոչ ալ անոր խուժողուժ լեզուն, զոր կարելի չէ հասկնալ: Ահաւասիկ Սիոնը, մեր փրկութեան քաղաքը. ձեր աչքերով տեսէք Երուսաղէմը, ճոխութեան քաղաքը, յաւիտենապէս անշարժ վրանի մը պէս, որուն ո՛չ ցիցերը կը խախտին, ոչ ալ պարանոսները կը փրթին: Այնտեղ ձեր մէջ ներկայ պիտի ըլլայ Տէրը իր փառքով, եւ երկիրը ձե՛րը պիտի ըլլայ իր լայնահուն դետերով ու ջրանցքներով. ա՛լ օտարութիւն պիտի չերթաք եւ ձեր նաւերը պատերազմի պիտի չելլեն, որովհետեւ մեր մեծ Աստուածը այլեւս պիտի չլքէ մեզ: Տէրն է մեր հայրը, Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, ի՛նքն է որ մեզ պիտի փրկէ:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՄ ՆԱՄԱԿԷՆ
(12.1-13.10)**

Ուտի, եղբայրներ՛, քանի Աստուած այնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ, կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի զոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ատրկա է Աստուծոյ ուզած ճշմարիտ պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ բնտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարելալ:

Ինձի տրուած Աստուծոյ շնորհքով հետեւեալ պատուէրը կու տամ իւրաքանչիւրիդ. - մեծամիտ եւ ինքնահաւան մի՛ ըլլաք. ընդհակառակը, միշտ համեստ եղէք եւ միայն Աստուծմէ մեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէք դուք ձեզ: Ինչպէս

...Քրիստոսի միացած ըլլալով՝ մեզ բոլորս մէկ մարմին ենք:

մեր մարմինը բազմաթիւ անդամներ ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ սակայն, այնպէս ալ Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Թէպէտ որպէս անդամներ իրարու կապուած ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրին տարբեր պարգեւ մը տուած է, գոր պէտք է գործածենք: Եթէ պատգամախօսութեան պարգեւը ունինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհքը տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝ պէտք է ուսուցանենք: Եթէ յորդորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորդորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնողը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդազին թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ:

Ձեր սէրը թող անկեղծ ըլլայ: Ատեցէք ինչ որ չար է եւ տեւբար բարիին ձգտեցէք: Եղբօր պէս զիրար սիրեցէք գորովանքով: Յարգելու մէջ զիրար գերազանցեցէք: Եռանդազին աշխատեցէք առանց ծուլանալու: Ձերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէք: Յոյսով ուրախացէք, նեղութեանց մէջ համբերող եղէք, յարատեւ աղօթեցէք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ հիւրասէր եղէք:

Օրհնեցէք ձեզ հալածողները. մի՛ անիծէք, այլ օրհնեցէք: Ուրախացողներուն հետ ուրախացէք եւ լացողներուն հետ լացէք: Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէք. մեծամիտ մի՛ ըլլաք, խոնարհ մարդոց ալ ընկերութիւն ընելու զիջեցէք, եւ դուք ձեզ իմաստուն մի՛ համարէք:

Ոեւէ մէկուն չարիքին չարիքով մի՛ հատուցանէք: Ջանացէք ընել ա՛յն ինչ որ բոլոր մարդոց աչքին բարի է: Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք: Սիրելիներ, երբեք դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛ մտածէք, այլ ձգեցէք որ Աստուծոյ բարկութիւնը ընէ ատիկա. որովհետեւ Տէրը Սուրբ Գիրքին մէջ կ'ըսէ. «Ի՛մա է դատելու եւ պատժելու իրաւունքը. ե՛ս պիտի հատուցանեմ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Եթէ թշնամիդ փաղցած է, հաց տուր իրեն. եթէ ծարաւ է, ջուր տուր: Այսպէս վարուելովդ արդէն ամօթը զիմ կ'նայրէ»: Մի՛ պարտուիր չարէն, այլ բարիով յաղթէ չարին:

Ամէն մարդ պետական իշխանութեանց պէտք է հնազանդի, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ կը հակառակի, եւ հակառակողները իրենք գիրենք դատապարտութեան տակ կը դնեն: Իշխողները վախ չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ միայն չարագործներուն: Դուն կ'ըսեմ՝ իշխանութեանէն չվախնալ. բարիք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեան է անիկա, քու բարիքիդ համար կարգուած: Իսկ եթէ չար գործես՝ վախցիր անկէ, որովհետեւ գուր տեղը չէ որ սուր կը կրէ. որպէս Աստուծոյ պաշտօնեայ բարկութեամբ կը դատէ եւ կը պատժէ չարագործները: Ահա թէ ինչո՛ւ պէտք է իշխանութեանց հնազանդիլ. ո՛չ միայն

պատիժէն զերծ մնալու, այլ մանաւանդ խիղճով հանգիստ ըլլալու համար: Ատոր համար է նաեւ որ իշխանութեանց տուրք կը վճարէք, որպէսզի իբրեւ Աստուծոյ պաշտօնեաներ շարունակեն իրենց այդ դերը կատարել: Հետեւեալը անոնցմէ իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք:

Ոեւէ մէկու ոեւէ բանով պարտական մի՛ մնաք. միմիայն զիրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ պատուիրանները, «Մի՛ շնար, Մի՛ սպաններ, Մի՛ գողնար, Սուտ վկայութիւն մի՛ ըներ, Մի՛ ցանկար» եւ միւս բոլորը խտացած են սա միակ պատուիրանին մէջ. «Սիրէ ընկերդ քու անձիդ պէս»: Ով որ իր ընկերը կը սիրէ, չարիք չ'ըներ անոր: Ուրեմն սիրել՝ կը նշանակէ Աստուծոյ Օրէնքը լման գործադրել:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(5.17-48)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Մի՛ կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկինքի արքայութեանը մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, երկինքի արքայութեանէն ներս կրնաք մտնել ա՛յն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն ձեր հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութեանէն աւելի ըլլայ:

«Լսեր էք որ անցեալին բտուած է. «Մի՛ սպաններ, որովհետեւ անոր կը սպաննէ, պիտի դատապարտուի»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ով որ առանց պատճառի իր եղբօր դէմ բարկանայ, պիտի դատապարտուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, դարձեալ ատեան պիտի բերուի. կամ, ան որ իր եղբայրը անմիտ կոչէ, Գեհենի կրակին պիտի դատապարտուի: Եթէ զո՛հի սեղանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ սեղանին առջեւ, գնա՛ նախ հաշտուէ եղբօրդ հետ եւ ապա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ:

«Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ, երբ տակաւին ժամանակ ունիս. այլապէս քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը նետուիս: Վստահ եղիր, թէ բանտէն պիտի չելլես մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէք.

... ով որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ:

«Լսեր էք որ ըստած է. «Մի՛ շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ քեզ քեզ կը դայթակ-դեցնէ, հանէ՛ եւ նետէ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես քան ամբողջ մարմնով դժոխք նետուիս: Եթէ աջ ձեռքդ քեզ

կը դայթակդեցնէ, կտրէ՛ ու նետէ գայն, որովհետեւ, նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես, քան ամբողջ մարմնով դժոխք նետուիս:

«Ըստած է նաեւ. «Ով որ իր կիներ կ'արձակէ, անոր արձակման թուղթ թող տայ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. ան որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը կ'արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընկուց: Նոյնպէս, շնութիւն ըրած կ'ըլլայ ան՝ որ կ'ամուսնանայ արձակուած կնոջ հետ:


«Լսեր էք նաեւ որ անցեալին ըստած է. «Երդմնագանց մի՛ ըլլար, այլ կատարէ ինչ որ երդուած էիր Աստուծոյ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.

բնաւ երդում մի՛ ընէք, ո՛չ երկիրքի վրայ, որովհետեւ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ, որովհետեւ անոր ոտքի պատուանդանն է, ո՛չ Նորուսաղէ մի վրայ, որովհետեւ Մեծ Թագաւորին՝ Աստուծոյ քաղաքն է, եւ ո՛չ ալ քու գլուխիդ վրայ,

որովհետեւ չես կրնար մագ մը իսկ ճերմկնցնել կամ սեւցնել: Պարզապէս ձեր այոն այո թող ըլլայ եւ ոչը՝ ոչ: Անկէ աւելին չարէն կու գայ:

«Լսեր էք որ ըստած է. «Աչքի դէմ աչք պիտի հատուցանես եւ ակոսայի դէմ՝ ակոսայ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին: Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ գարնէ՛ միւս երեսդ ալ դարձուր անոր: Եւ եթէ մէկը ուզէ քեզ դատի կանչել չապիկդ առնելու համար, բաճկոնդ ալ տուր անոր: Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա: Եթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՛ տո՛ւր, եւ եթէ մէկը քեզմէ բան մը փոխ առնել ուզէ, երես մի՛ դարձնիր:

«Լսեր էք արդարեւ որ ըստած է. «Միրէ՛ ընկերդ եւ ատէ թշնամիդ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Միրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն: Այդպիսով դուք ձեր երկնաւոր Հօր գաւակները կը դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ միայն սիրողներ սիրէք, ի՞նչ տարբերութիւն կ'ունենաք մեղաւորներէն: Մեղաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ: Նմանապէս, եթէ միայն ձեր ծանօթները բարեկամ նկատէք, հեթանոսներէն եւ մեղաւորներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք: Անոնք ալ նոյնը չե՞ն ըներ: Արդ, դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹՔԱԵՐ ԾԷՆՐԱԵՆ

ՀԵՂԵԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԱՐԳԱՆԱՊԹԵՐ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՄՈՒՏԵԱՆԻ

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԳ

Ով Տէր, հոգեւոր մեծ ուսուցիչը՝ Իսահակ Նինուէցի ըսած է. «Դուն որ կը ճանչնաս մեղքերդ, աւելի մեծ ես քան ան՝ որ ուրիշը մեղքներէն կը յարուցանէ: Դուն որ կրնաս անձիդ վրայ ամբողջ ժամ մը իսկապէս լսել, աւելի մեծ ես քան ան՝ որ ամբողջ աշխարհին կ'ուսուցանէ: Դուն որ գիտես քու իսկ տկարութիւնդ, աւելի մեծ ես քան ան՝ որ հրեշտակները կը տեսնէ»: Որքան նշմարիտ են այս բառերը, Տէր: Կը գիտակցիմ, որ մեղանշական գործերով իմ գերգրադուսմ, ձեւ մըն է խուսանաւելու իմ իսկական մեղանշականութենէս: Ատիկա կը նշանակէ նաեւ խուսափում ողորմութիւնդ դիմաւորել: Այնքան աստեւ որ ողորմութիւնդ չեմ ասրած, գիտեմ որ տակաւին կը փախչիմ իսկական իմ մեղքէս:

Եկուր, Տէր: Ծեղքէ եւ անցիր կամայական հակումներս, անձկութիւններս, վախերս ու յանցանքի զգացումներս, եւ թող որ տեսնեմ իմ մեղքս ու Քու ողորմութիւնդ: Ամէն:

(Շարունակելի 19)

ՀՌԻԱՆԴԵՐՈՒՄ ԱՅԵՂՈՒԹԻՄ Բարեհաճեցէք հեռաձայնել

Արժ. Տ. Գառնիկ
Ա. Քինյ. Գոյունեանի.
514 909 5203 թիւին:

**Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆՒՄՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ
ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՒ ՀՍԿՈՒՄԻ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԼՍԱՐԱՆ 2020**

Արեւազալի ժամերգութիւններ
Ամէն Ուրբաթ առաւօտեան 10.00-10.45

ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԼՍԱՐԱՆ՝

Բ.

Չորեքշաբթի, 4 Մարտի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝ «ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՉ ՉՈՀ»,
Կը խօսի Գերյ. Տ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան:

Գ.

Չորեքշաբթի, 11 Մարտի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝ «ՀՈԳԵՒՈՐ ԲՈՒԺՈՒՄ»,
Կը խօսի Վերապատուելի Յովհաննէս Սվանեան:

Դ.

Չորեքշաբթի, 18 Մարտի երեկոյեան ժամը 6.30-ին՝
ՄԻՋԻՆՔԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ:

Ե.

Չորեքշաբթի, 25 Մարտի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝
**«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ/ՎԱՍՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ»,**

Կը խօսի Բրշ. Թորոս Սրկ. Պապիկեան:

Զ.

Չորեքշաբթի, 1 Ապրիլի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝ «ՏԿԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՉ ՉՕՐՈՒԹԻՒՆ»,
Կը խօսի Բրշ. Կարօ Սրկ. Նոյսուտեան: